ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

30.04. 2018 Թ. Գ. ՎԱՐԴԱՇԱՏ

ՎԱՐԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ

Տեղի ունեցավ Արարատի մարզի Վարդաշատ համայնքի ավագանու հերթական թիվ 3 նիստը:
Նիստը վարում էր համայնքի ղեկավար Ա. Կարապետյանը, քարտուղարում էր աշխատակազմի ղեկավար Խ. Ասատրյանը:
Նիստին ներկա էին ավագանու բոլոր 4 անդամները:

ՕՐԱԿԱՐԳ - 1. Գյուղի սանիտարահիգենիկ վիճակի ուսումնասիրություն:
/զեկ. Ա. Կարապետյան/
2.Ոռոգման ջրագծերի վերնորոգում
/զեկ. Ա. Կարապետյան

ԼՍԵՑԻՆ - Գյուղի սանիտարահիգենիկ վիճակի ուսումնասիրության վիճակի մասին:Հարցի շուրջ հանդես եկավ գյուղապետ Ա. Կարապետյանը, մասնավորապես նշեց, որ վիճակը գյուղում բարվոք է, սակայն դեռ կան անկարգապահ բնակիչների կողմից ճանապարհների և մերձակա գոտիների աղտոտման դեպքեր: Անհրաժեշտ է անընդհատ ուշադրության կենտրոնում պահել և հետևել բարեկարգ համայնք ունենալու համար:Միաժամանակ գյուղապետը նշեց որ (Մաքուր Հայաստան)ծրագրի իրականացման նպատակով ձեռնարկվել է մի շարք միջոցառումներ. Փակվել և մաքրվել են բոլոր աղբավայրերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Խ. Ասատրյանը, Հ. Գևորգյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Գյուղի սանիտարահիգենիկ վիճակը գնահատել բավարար:

Լսեցին- 2. Ոռոգման ջրագծերի վերանորոգում հարցի շուրջ համայնքի ղեկավարը նշեց որ ոռոգման ջրագծերը գտնվում են անմխիթար վիճակում և ջրի մոտավորապես 60 65 տոկոսը չի ծառայում իր նպատակին որի համար 90 –ից 100 մետր կիսախողովակներ տեղադրվել են և ապահովել են ջրի լրիվ օգտագործումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Լ. Զոհրաբյանը, Վ. Հակոբյանը

ՈՐՈՇԵՑԻՆ -Ջրագծերի վրա կատարված աշխատանքը համարել բավարար

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Խ. Ասատրյանը
2. Հ. Գևորգյանը:
3. Լ.Զոհրաբյանը
4. Վ.Հակոբյանը

ՎԱՐԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Խ. ԱՍԱՏՐՅԱՆ